ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

ԱԺ նախագահ Ա.Սիմոնյանին

Պարոն Սիմոնյան,

Առաջնորդվելով Սահմանադրության 197-րդ հոդվածով և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 153-րդ հոդվածով՝ Ձեզ ենք ներկայացնում «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ Հակոբ Հակոբյանի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի որոշման նախագծի փաթեթը:

Գրությանը կցվում է.

1. Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության որոշումը,
2. «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ Հակոբ Հակոբյանի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը,
3. Նախագծի ընդունման հիմնավորումը,
4. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի թիվ 04/2025/Վ/Վ եզրակացությունը:

«Հայաստան» խմբակցության ղեկավար՝ Ս.Օհանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ N

12.11.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ Սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 2-րդ մասով ՝ԱԺ «Հայաստան» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ՝

1.Ազգային ժողովին ներակայացնել «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ Հակոբ Հակոբյանի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը,քանի որ վերջինս խախտել է հանրային ծառայողների քաղաքական չեզոքության և զսպվածության պահանջները:

«Հայաստան» խմբակցության ղեկավար՝ **Ս.Օհանյան**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Հիմք ընդունելով Սահմանադրության 197-րդ հոդվածը և առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Սահմանադրական օրենքի 153-րդ հոդվածով՝ Հեռուսատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ Հակոբ Հակոբյանի կողմից հանրային ծառայողի վարքագծի կանոնների խախտման հիմքով Հակոբ Հակոբյանի՝ որպես հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամի, լիազորությունները դադարեցնել:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

2025 թվականի փետրվարի 13-ին Հակոբ Հակոբյանը, լինելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ, ակնհայտորեն խախտելով ռանրային ծառայողների քաղաքական զսպվածության և չեզոքության կարևորագույն սկզբունքներից մեկը՝ հարցազրույց է տվել առաջին լրատվականի եթերով (https://youtu.be/PNf_XzuSX5I?si=M4j0VrvTMX6xLIEW), որի ընթացքում չի ցուցաբերել քաղաքական զսպվածություն, անհիմն մեղադրանքներ է հնչեցրել Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության նկատմամբ և քարոզել է ակնհայտ ատելություն:

ՀՀ Սահմանդրության 197-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը վկայում են ՝ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն: Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պայմաններից որևէ մեկը խախտելու դեպքում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

Վերոնշյալ հարցազրույցում Հակոբ Հակոբյանը արտաբերում է մտքեր որոնցում արտահայտվում է նրա ակնհայտ քաղաքական վերաբերմունքը ՀՅԴ նկատմամբ և հնչեցնում է անհիմն մեղադրանքներ, ինչպիսիք են «մեր պատմական դժվարությունների մեջ Դաշնակցության մեղքը շատ մեծ է», «դաշնակցության գաղափարախոսությունը շատ վտանգավոր է հայ ժողովրդի համար» և այլն: Սրանք ակնհայտ քաղաքական գնահատականներ են, որոնք նաև ատելություն են քարոզում Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության նկատմամբ:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը իր թիվ 04/2025/Վ/Վ եզրակացությամբ, արձանագրել է, որ քաղաքական կուսակցության ուղղակի

անվանակոչմամբ դրա գործունեությունը կամ գաղափարախոսությունը քննադատող հրապարակային խոսքը ելույթին հաղորդում է քաղաքական բնույթ:

Սա այն դեպքում, երբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը իր՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորների, դատավորի, բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները սահմանելու մասին որոշման մեջ (ընդունված՝ 6 փետրվարի 2024 թվական N 02-Ն) հստակ սահմանել է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քաղաքական զսպվածության պարտավորություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձը, ... ***պարտավոր է զերծ մնալ քաղաքական բնույթի հանրային ելույթներ ունենալուց***, քաղաքական կողմնորոշում ունեցող հոդվածներ հրապարակելուց կամ սոցիալական մեդիայում ունեցած իր օգտահաշվից քաղաքական որևէ կուսակցության օգտին կամ դրա դեմ գրառումներ կատարելուց, նմանատիպ գրառումներ հավանելուց կամ տարածելուց:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը իր թիվ 04/2025/Վ/Վ եզրակացության մեջ արձանագրել է, որ Վարքագծի կանոնագրքի 64-րդ կետը կիրառելի է հրապարակմամբ ներկայացված հարցազրույցի ընթացքում Հ.Հակոբյանի դրսևորած վարքագծի նկատմամբ, անկախ այն հանգամանքից թե հարցազրույցի ընփացքում Հակոբ Հակոբյանը ներկայացվել է որպես Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ թե ոչ:

Ամփոփելով վերոգրյալը՝Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը եզրակացրել է տվել Հակոբ Հակոբյանի կողմից խախտվել է վարքագծի կանոնը:

Ըստ այդմ Հակոբ Հակոբյանը (Հակոբ Մովսես) ակնհայտորեն խախտել է վերոնշյալ սկզբունքները և նման պահվածքը խիստ մտահոգիչ է հատկապես այն փաստի ուժով, որ հանրային ծառայողի վարքագծի նորմերը սոսկալույթ խախտած Հակոբ Հակոբյանը դեռևս շարունակում է մնալ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ և օրինակ

ծառայել մյուսների համար՝ շարունակելով խեղաթյուրել հանրային ծառայողի վերաբերյալ պատկերացումները:

Առ այդ, օրենսդրական վերը նշված պահանջները անվերապահ կատարելու նպատակով Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցությունը հանդես է գալիս սույն նախաձեռնությամբ:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 04/2025/Վ/Վ

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԻ ԽԱԽՏՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 16 հունիսի, 2025 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ Հակոբ Հակոբյանի 2025 թվականի մարտի 18-ին վարքագծի կանոնի առերևույթ խախտման վերաբերյալ հարուցված թիվ 04/2025/Վ/Վ վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑ

I. Նախապատմություն

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածով և հիմք ընդունելով 2025 թվականի մարտի 11-ին Հանձնաժողով մուտքագրված՝ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի՝ թիվ ԱԺԽ.2/1047-2025 դիմումը (այսուհետ՝ Դիմում), ինչպես նաև «1in.am» լրատվական կայքի՝ «Մեր պատմական

դժբախտությունների մեջ Դաշնակցության մեղքը շատ մեծ է. Հակոբ Մովսես» հրապարակումը (այսուհետ՝ Հրապարակում)[1], 2025 թվականի մարտի 18-ին կայացրել է Հակոբ Հակոբյանի կողմից վարքագծի կանոնի առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին թիվ 04/2025/Վ/Վ որոշումը (այսուհետ նաև՝ Հարուցման որոշում):

1.2 Դիմումով ներկայացված տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի փետրվարի 13-ին հրապարակված՝ «1in.am» լրատվական կայքին տրված հարցազրույցի ընթացքում Հակոբ Հակոբյանը չի ցուցաբերել քաղաքական զսպվածություն, անհիմն մեղադրանքներ է հնչեցրել Հայ Հեղափոխական Դաշնակցության նկատմամբ և քարոզել է ակնհայտ ատելություն: Դիմումով, մասնավորապես, նշվել է, որ նշված հարցազրույցում Հակոբ Հակոբյանն արտաբերում է մտքեր, որոնցում արտահայտվում է նրա ակնհայտ քաղաքական վերաբերմունքը ՀՅԴ նկատմամբ և հնչեցնում է անհիմն մեղադրանքներ, ինչպիսիք են «մեր պատմական դժվարությունների մեջ Դաշնակցության մեղքը շատ մեծ է», «դաշնակցության գաղափարախոսությունը շատ վտանգավոր է հայ ժողովրդի համար» և այլն:

1.3. Հրապարակմամբ ներկայացված տեղեկատվության համաձայն՝

1.3.1. Հրապարակված հարցազրույցի 10:35 րոպեին Հ.Հակոբյանը նշել է.

«Եվ որպես մշակույթի մարդ՝ ինձ թվում է, Ձեզ հետ միասին, ես պնդում եմ, որ եթե մենք այդպիսի (նկատի ունի՝ եվրոպական, ԵՄ անդամակցությանն ուղղված – նշումը՝ Հանձնաժողովի) *կողմնորոշում ենք որդեգրում, մենք պետք է մեր ժողովրդին այդ կողմնորոշման փիլիսոփայական, տնտեսական, աստվածաբանական, քաղաքական, հումանիստական բոլոր պարամետրերին տեղյակ պահենք, որպեսզի մեր ժողովուրդը հասկանա, որ խոսքը ոչ թե մի տեղից ելնել, մյուս տեղ գնալու մասին է, այլ իր ամբողջ ձևաբանությանը հատուկ մի սխեմայի մեջ մտնելու մասին է, որտեղ ինքն իրեն ավելի անվտանգ և ստեղծագործաբար ազատ կզգա: Դրա անելու համար ես երբ որ երեկ էսօր լսում էի մեր Ազգային ժողովի բանավեճերը, իմ մեջ մի միտք ծագեց,*

[1] Հասանելի՝ https://www.1in.am/3528278.html

որ մենք՝ մշակույթի գործիչներս, մշակութորեն մտածող մարդիկս, մեր պետությունից, մեր Կառավարությունից պահանջենք, որպեսզի նա անգրագիտության այդ բացը լրացնի: Այսինքն, առնվազն թարգմանի բոլոր այն մեծագույն ստեղծագործությունները, վեպերը, պրակտատները, փիլիսոփայական աշխատությունները, որոնք մեր ժողովրդին կբացատրեն, թե ինչ բան է եվրոպական պետությունը: Օրինակ, Եվրոպայում էլ տեղի են ունենում խռովություններ, Կառավարությունների դեմ էսպես ասած բունտեր: Բայց ինչի՞ց է, որ մեզ մոտ դա քաղաքական երանգավորում է ստանում՝ աշխարհաքաղաքական բոլոր մանրամասներով: Ես կարծում եմ՝ սրա պատճառը այն է, որ մեր ժողովուրդը չգիտի, չգիտի այդ ամենի մասին, և որովհետև չգիտի, իրեն թվում է, ինչպես օրինակ ես էսօր էստեղ տրանսպորտով գալիս կանգառում տեսա, որ կանգառում կանգնած և իր ազգաբնակչությանը պետության դեմ մղող, պետության դեմ հանող, պետության դեմ պրոպագանդա անող ինչ-որ մի խաժամուժ կարծում է, թե դա ընդդիմություն է: Երբ որ հասկանում ենք մենք, որ կարելի է ասած նաև բունտ անել և ասել՝ գիտեք, մի վճարեք, մենք բունտ ենք անում և... Բայց երբ որ դա հանվում է պետության դեմ՝ «էս պետությունը մեզ կործանում ա, էս պետությունը մեզ տանում է դեպի կործանում, սրանց երբ պիտի սաղին գնդակահարենք», կանգառում ղժղժում էին:»:

1.3.2. Նույն հարցազրույցի 24:16 րոպեին հարցազրուցավարը հնչեցնում է հետևյալ հարցը. *«(...) ունենք հիմա մի իրողություն, երբ Եվրոպայից եկած նացիոնալիզմը՝ Եվրոպայից եկած սոցիալիզմը իր մեջ ներառած և առաջին հանրապետության հիմքերը դրած Դաշնակցությունը էսօր դեմ ա խոսում էս ամեն ինչին, էսօր շրջաբերական ա արձակում, որ «դե լավ դե, ինչ պետություն, ինչ բան»: Որ գալիս է մի բան, որ սովետի դեմ պայքարած, ցարիզմի դեմ պայքարած կուսակցությունն այսօր, այս հետխորհրդային շրջանում մենք տեսնում ենք, որ ուղղակի կոլաբորացիոնիզմ է դրսևորում Ռուսաստանի, ռուսական իմպերիալիզմի առաջ, որ ուղղակի ուզում է վերացնել հայկական պետականությունը և դրա համար ոչինչ չի խնայում: Այսօր հենց դրա մասին էլ են բանավեճեր գնում, որ մենք, այո, ուզենք, չուզենք, մեր ազգային պատկերացումները սերում են Դաշնակցությունից, բայց մեծ տրանսֆորմացիաներ անցնելով: Դուք խոսում էիք մեր քաղաքական մտքի*

տրանսֆորմացիայի անհրաժեշտության մասին, ի՞նչ դիտարկումներ ունեք սրա հետ ավելի մանրամասնորեն, պարոն Մովսես:»: Հարցին ի պատասխան՝ Հ.Հակոբյանը նշում է. *«Քանի որ Դուք շատ ցավոտ թեմայի մասին եք խոսում՝ Դաշնակցության, որը մեր պատմության մեջ երկակի նշանակություն է ունեցել: Ոչ ոք չի կարող ժխտել, որ դա պատմական ամենադժվար ժամանակներում գործած կուսակցություն է, բայց ոչ ոք նաև չի կարող ժխտել, որ 10-րդ դարից սկսած մեր պատմական դժբախտությունների անհաշվարկայնության մեջ Դաշնակցության մեղքը շատ մեծ է: Էստեղ շատ հետաքրքիր մի բան կա, կուսակցությունն ինչքան էլ ավանդական լինի, ավանդական կուսակցությունները նույնպես նորանալու, թարմանալու, ադապտացվելու, իրենց ժամանակաշրջանի խնդիրների մեջ մտնելու և դրանց լուծումները փնտրելու պարտավորություն ունեն: Ես կարծում եմ, որ Դաշնակցությունը իր ազգային փիլիսոփայությամբ, ազգային գաղափարախոսությամբ, փիլիսոփայություն չասենք, ուղղակի ինքը իրեն դրել է մի շրջանակի մեջ, որից դուրս գալ ինքը հազիվ թե կարողանա, եթե իր գաղափարախոսության ամբողջ իդիոմատիկան չփոխի: Տեսեք, օրինակ, երբ որ դարասկզբին, 20-րդ դարի սկզբին Դաշնակցությունը, էսպես ասած, իր ակտիվ գործունեությունը ծավալում էր և իր գործունեությունը փորձում էր դնել գաղափարական, իդիոմատիկ միջավայրի մեջ, ինքը, հեղափոխական նկրտումներից ելնելով, որոնք այդ ժամանակաշրջանում հուշում էին թե բալկանյան պատերազմները և թե մանավանդ ռուսական միջավայրի տրամադրությունները, իր դրոշի վրա գրեց՝ մահ կամ ազատություն: Դաշնակցությունն ինչից է դժգոհում, երբ որ իր դրոշի վրա դրված երկու ընտրություններից մեկը ստացավ ինքը: Դաշնակցությունը, ամեն մի կուսակցություն կարող է սխալվել, պատմության մեջ շատ-շատ են դեպքերը, երբ որ սերունդներն են սխալ մտածել: Դաշնակցությունը պետք է փոխի իր ազգային ամբողջ գաղափարախոսությունը: 21-րդ դարում, երբ որ մենք ունենք պետություն՝ Հայաստանի Հանրապետություն, 3 միլիոնանոց մոնոլիտ, միասեռ բնակչությամբ, երբ որ մենք ունենք պետական ամբողջ աքսեսուարները, երբ որ մենք Միավորյալ ազգերի կազմակերպության անդամ ենք, երբ որ մենք միջազգայնորեն ճանաչված և միջազգային իրավունքի չափանիշներով նաև պարտավոր ենք նաև շփվել մեր շրջակայքի, միջավայրի, առանձնապես մեր հարևանների հետ, Դաշնակցությունը*

միթե, եթե չասեմ ժամանակավրեպ, ապա վտանգավոր չի համարում այս իրավիճակի համար իր «մահ կամ ազատություն» կարգախոսը: Ինքը կուսակցությունը տրադիցիա չի և քարացած, էսպես ասած, ժամանակի, սաթի մեջ քարացած թեփուկ չի: Կուսակցություններ կան աշխարհում, որոնք հարյուր տարեկան են և ավելի քան հարյուր տարեկան են, բայց հարյուր տարվա ընթացքում ժամանակի, տասնամյակների բերումներին համապատասխան հարյուր անգամ օբյեկտիվորեն, ինչպես պահանջում էր ժամանակը, փոխել են իրենց դիրքորոշումը: Ինչի՞ ենք էսքան խոսում Դաշնակցության մասին, ի վերջո դա, Հայաստանում էսօր տասնյակ կուսակցություններ կան, դա կուսակցություններից ընդամենը մեկն է: Որովհետև մեր ազգային պատկերացումների մեջ, հայ ժողովրդի ազգային պատկերացումների մեջ՝ ինքնապաշտպանության, ինքնապահպանության, զարգացման, տնտեսության, հարևանների, քաղաքականության, չգիտեմ հազարավոր տեխնոլոգիաների մեջ դեռևս դրված է դաշնակցական գաղափարախոսությունը, որը այսօր շատ վտանգավոր գաղափարախոսություն է հայ ժողովրդի համար: Ես առանձնապես եմ ասում այսօր, չեմ ասում, թե երեկ վտանգավոր չի եղել, մենք տեսանք, թե պատմության մեջ ինչ հարվածներ կերանք մենք մեր երեք-չորսհազարամյա հայրենիքում, ուղղակի բնաջնջվեցինք: Դրա պատճառը այն է, որ մեզ առաջնորդող կուսակցությունները ճիշտ չպատկերացրեցին քաղաքական միջավայրերում մեր միմիկրիաների, մեր ադապտացիաների, մեր քաղաքական հարմարվողականության, քաղաքական մեխանիզմների մեջ մեզ տեսնելու կարողությունները և գնացին դեվիզների հետևից՝ մահ կամ ազատություն, որոնցից դե երկու այլընտրանք է դրվել, երկուսից մեկն էլ մենք ստացանք: Էսօր մեր երկրի, մեր ժողովրդի դրոշակի վրա պետք է գրվի զարգացում, առաջընթաց, աշխատանք և նման բաներ... բանականություն և այլն, և այլն: Ես էսօր շատ ուրախ կլինեի, եթե Դաշնակցությունը վերականգներ, վերածներ իրեն, որովհետև դա ի միջի այլոց, այսպես թե այնպես, դա իհարկե ավանդական կուսակցություն է, բայց էսօրվա խնդիրներով վերածներ իրեն և ոչ թե փորձեր էսօրը մտցնել իր կարգախոսների, դեվիզների և քաղաքականությունների մեջ: Օրինակ, ես շատ ուրախ կլինեի, որ Դաշնակցությունը Հայաստանի ազգաբնակչությունը, ժողովրդագրությունը մեծացնելու քաղաքականություն մշակեր և դա պարտադրեր մեր իշխանություններին և

մեր Կառավարությանը: Ինչպես անել, որ առաջիկա, չգիտեմ, 20-30 տարիների ընթացքում Հայաստանի բնակչությունը այսինչ տոկոսով աճի: Էդ ժամանակ, երբ որ մենք կունենանք ֆիզիկական էդ հնարավորությունները, մենք ուրիշ ձև կխոսենք:»:

1.4. Հանձնաժողովի կողմից 2025 թվականի մարտի 20-ի թիվ 01/1169-2025 գրությամբ Հարուցման որոշումը փոստային ծառայության միջոցով ուղարկվել է (հավաստում՝ LO127150492AM ստացական) Հակոբ Հակոբյանին՝ միաժամանակ պահանջելով ներկայացնել պարզաբանում վարույթի շրջանակներում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ և դրան կցել փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր: Նշված գրությունը Հակոբ Հակոբյանը չի ստացել. 2025 թվականի ապրիլի 30-ին թիվ LO127150492AM փոստային առաքանին վերադարձվել է Հանձնաժողով «Չպահանջված» նշումով:

Հարուցման որոշումը՝ թիվ 01/1169-2025 գրությամբ 2025 թվականի մայիսի 2-ին ուղարկվել է Հակոբ Հակոբյանի էլեկտրոնային փոստի հասցեին, որի ստացման վերաբերյալ հավաստումը 2025 թվականի մայիսի 8-ին ուղարկվել է Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:1.5. 2025 թվականի մայիսի 15-ին Հանձնաժողով մուտքագրված թիվ Մ-2920-2025 գրությամբ Հակոբ Հակոբյանը ներկայացրել է դիրքորոշում (այսուհետ՝ Դիրքորոշում):

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2025 թվականի մայիսի 15-ին Հանձնաժողով մուտքագրված թիվ Մ-2920-2025 գրությամբ վարույթում քննարկվող առերևույթ իրավախախտման առնչությամբ Հակոբ Հակոբյանը Դիրքորոշում է ներկայացրել առ այն, որ.

Պետական քաղաքական պաշտոնատար անձանց խոսքի, կարծիքի արտահայտման նկատմամբ սահմանափակումը տարանջատում է քաղաքական զսպվածությունը և քաղաքական չեզոքությունը: Դիրքորոշմամբ նշվել է, որ մինչ օրենսդրական ակտերին անդրադառնալը Հ.Հակոբյանը հարկ է համարում անդրադառնալ հիշյալ բառերի բացատրական նշանակություններին: Այսպես,

Զսպվածություն[2]՝ գ., 1. Զսպված լինելը: 2. Զուսպ լինելը, չափավորություն, մեղմություն:

Չեզոքություն[3]՝ [գոյական], 1. Չեզոք լինելը, չեզոք վիճակ կամ հատկություն, 3. (քաղաքական) Հակամարտ կողմերից որևէ մեկին չհարելը:

Դիրքորոշմամբ նշվել է, որ վերոգրյալ երկու բառերն իրենց բացատրական ծավալներով շատ տարբեր են, հետևաբար տարբեր են նաև հիշյալ սահմանափակումների ծավալները: Մի դեպքում գործ ունենք խոսքի ավելի չափավոր, մեղմ արտահայտման հետ, որպիսի պարագայում տվյալ պաշտոնատար անձն իր գործողություններով չպետք է հարի, սատարի, աջակցի (քաղաքական) հակամարտության որևէ կողմի:

Դիրքորոշման համաձայն՝ այս տարանջատումը կարևոր է, սա ինքնանպատակ չէ, այլ Օրենսդրի կամքն է. պաշտոնատար մի անձի նկատմամբ քաղաքական չեզոքություն է սահմանել, մյուսի նկատմամբ՝ զսպվածություն:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը երկու դրվագով՝ «Դատավորի ապաքաղաքականացվածությունը» (Հոդված 4) և «Դատավորի ընդհանուր վարքագծի կանոնները» (Հոդված 69, մաս 1, 3-րդ կետ) սահմանել է «Դատավորը հրապարակային ելույթներում և ցանկացած այլ հանգամանքներում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն:»: Դիրքորոշմամբ նշվել է, որ վկայակոչված նորմերից տեսնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում դատավորների հրապարակային ելույթներ ունենալու նկատմամբ ամրագրված է քաղաքական զսպվածություն և չեզոքություն դրսևորելու իմպերատիվ պահանջը: Դիրքորոշման համաձայն՝ հատկանշական է, որ Օրենսդիրը գրելով «զսպվածություն» և «չեզոքություն» բառերը՝ հստակ արձանագրել է, որ վերջիններիս թե՛ ծավալային առումով, և թե՛ կարգավորման առարկայի իմաստով տարբեր են:

---

[2] http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?d

[3] https://bararan.am/%D5%B9%D5%A5%D5%A6%D5%B8%D6%84%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

Դիրքորոշմամբ նաև նշվել է, որ Սահմանադիրը կոնկրետ բնագավառում ծառայություն իրականացնող անձանց համար սահմանել է բացառապես չեզոքություն: Այսպես, քաղաքական հարցերում չեզոքություն պահպանելը ՀՀ ԶՈՒ պարտականությունն է:[4]

Սահմանադիրը, ի թիվս այլ պաշտոնատար անձանց[5], Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամի համար սահմանել է՝ «Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն[6]:»:

Վերոգրյալի համատեքստում Դիրքորոշմամբ նշվել է, որ Սահմանադրական և օրենսդրական կարգավորումների լույսի ներքո ակնհայտ է, որ քաղաքական զսպվածությունը որևէ պարագայում չի կարող ենթադրել պաշտոնատար անձի կողմից քաղաքական հարցերի և/կամ հանրային հնչողություն ու կարևորություն ունեցող հարցերի վերաբերյալ կարծիքի արտահայտման իսպառ բացառում կամ բացակայություն:

Դիրքորոշմամբ նաև նշվել է, որ Հ.Հակոբյանն իր հարցազրույցներում մշտապես որդեգրել է այն փիլիսոփայությունը, որ ինքը հանդես չի գալիս որպես Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ, այլ՝ բանաստեղծ, թարգմանիչ, Հայաստանի մշակույթի նախկին նախարար: Այսինքն, ինքը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իր զբաղեցրած պաշտոնի նկատմամբ տարածվում է քաղաքական զսպվածության իմպերատիվ պահանջը, հարցազրույցում չի անդրադարձել կամ պատասխանել այնպիսի հարցերի, որոնք կարող էին անաչառ դիտորդի մոտ տպավորություն ստեղծել, որ ինքը հանդես է գալիս Հանձնաժողովի անդամի դիրքերից, քննարկում է այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են Հանձնաժողովի Սահմանադրական և օրենսդրական գործառույթներին, որոնք առնչվում են Հանձնաժողովի որոշումներին կամ որոշումների կայացմանը: Ինքը հիշյալ

---

[4] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (2015 թվականի Փոփոխություններով), Հոդված 14:

[5] Մարդու իրավունքների պաշտպան, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ, Հաշվեքննիչ պալատի անդամ, Կենտրոնական բանկի խորհրդի անդամներ:

[6] Տե՛ս, ՀՀ Սահմանադրություն (2015 թվականի Փոփոխություններով), ՀՈդված 197, 5-րդ մաս 2-րդ նախադասություն:

հարցազրույցում նմանաբովանդակ հարցեր չի քննարկել, ինչպես նաև չի պատասխանել նմանատիպ հարցերի:

Դիրքորոշմամբ նշվել է, որ Սահմանադիրը քաղաքական զսպվածություն պահպանելու կամ դրսևորելու պարտականությունը սահմանել է այսպես՝ «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում»: Դիրքորոշման համաձայն՝ Հանձնաժողովի անդամներն իրենց լիազորություններն իրականացնում են բացառապես Հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթների և Հանձնաժողովի նիստերի ընթացքում, այլ բառերով ասած՝ որևէ հարցազրույցի ընթացքում Հանձնաժողովի որևէ անդամ չի իրականացնում Սահմանադրական կամ օրենսդրական որևէ լիազորություն: Սակայն, եթե անգամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը համակարծիք չէ իր այս մոտեցման հետ՝ հիշյալ պարագայում, ըստ Դիրքորոշման, Հ.Հակոբյանի կողմից քննարկվող հարցի համատեքստում չի թույլատրվել որևէ նորմի խախտում, քանի որ ինքն իրացրել է Սահմանադրությամբ իրեն վերապահված իրավունքները՝ պահպանելով իր պաշտոնեական կարգավիճակից բխող պարտականությունները:

Դիրքորոշմամբ նշվել է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իր որոշման մեջ մի քանի անգամ հստակ արձանագրել է, որ ոչ Սահմանադրությունը, ո՛չ ներպետական տարբեր օրենքներ և ո՛չ էլ Կանոնագիրքը չեն նույնացնում քաղաքական չեզոքություն և քաղաքական զսպվածություն սահմանափակումները:

Դիրքորոշման համաձայն՝ Սահմանադիրը հստակ սահմանել է, որ Հանձնաժողովի անդամները կարող են հրապարակային ելույթներ ունենալ, սակայն հստակ պահպանելով քաղաքական զսպվածության պահանջ-պարտականությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դիրքորոշմամբ նշվել է, որ Հ.Հակոբյանը պնդում է, որ իր կողմից ոչ Սահմանադրություն, ոչ էլ Օրենսդրության խախտում չի եղել, որպիսի պարագայում խնդրում է կարճել իր նկատմամբ հարուցված վարչական վարույթը:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

3.1 ՀՀ Ազգային ժողովի 2022 թվականի հունվարի 21-ի թիվ ԱԺՈ-23-Ա որոշմամբ Հակոբ Հակոբյանն ընտրվել է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ՝ վեց տարի ժամկետով և պաշտոնավարում է մինչ օրս:

3.2 Հրապարակմամբ ներկայացված հարցազրույցի ուսումնասիրմամբ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

3.2.1 Հարցազրուցավարը Հ.Հակոբյանին ներկայացնում է որպես՝ «Հակոբ Մովսես՝ բանաստեղծ, թարգմանիչ, Հայաստանի մշակույթի նախկին նախարար» և չի հիշատակում վերջինիս՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ լինելու հանգամանքը:

3.2.2. Հարցազրույցի 4:13 րոպեին հարցազրուցավարը հնչեցնում է հետևյալ հարցը.

«Պարոն Մովսես, այս օրենքի ընդունումը մի լայն դաշտ է բացում այն քննարկումների, որոնք մինչ այդ էլ արդեն ընթանում են, ինչ-որ դրա հետ կապված կրքեր են բորբոքվում, դրա հետ կապված համաձայնություններ և անհամաձայնությունների մասին ենք մենք լսում: Ի վերջո, Հայաստանը պետություն է, բայց ոնց որ թե, այսպես ասենք, թե մեր քաղաքական դասի որոշ սեգմենտի մոտ, թե հասարակության որոշ սեգմենտի մոտ կարծեք թե այդ ընկալումը մի քիչ հետ է մնում ժամանակի ընթացքից և ինչ որ տեղ էլ, այո, ազդում մեր ընթացքի վրա: Եվ դրա պատճառներն էլ մասամբ նաև, զգալի մասով նաև օբյեկտիվ են, բայց նաև այստեղ աշխատանքի տեղ կա: Դուք բնականաբար ուշի ուշով հետևում եք այդ քննարկումների, բանավեճերի, վեճերի այդ ընթացքին: Ձեր մոտեցումը, համեցեք:»:

Նշված հարցին Հ.Հակոբյանը ներկայացնում է հետևյալ պատասխանը.

«Շնորհակալություն: Տասնյակ անգամներ ասել ենք, որ Հայաստանը և հայ ժողովուրդը իր արժեհամակարգով մտնում է այն ընտանիքի մեջ, որը կոչվում է եվրոպական-քրիստոնեական: Ես քրիստոնեականը ավելացնում եմ նրա համար, որպեսզի եվրոպականի ոչ կողմնակիցները թյուրիմացություններ չունենան, որովհետև մշակույթները ստորաբաժանվում են, տիպաբանվում են ոչ միայն աշխարհագրականորեն, այլ նաև հենց իրենց տիպաբանությամբ, մենք, այո, եվրոպական-քրիստոնեական մշակույթ ենք (հարցազրուցավարը նշում է՝

կրոնամշակութային, այսպես, հա՞): Այո: Այո: 5-րդ դարից սկսած այդպես է եղել, այդպես էր 18-19-րդ դարերում և այդպես պետք է լինի նաև այսօր: Ինչու եմ ասում՝ այսօր, էդպես պետք է լինի նաև այսօր: Էստեղից հարց է ծագում՝ իսկ այսօր այդպես չէ՞: Եվ ես պետք է պատասխանեմ, որ իհարկե այդպես չէ: Մենք 20-րդ դարում հայտնվել ենք եթե ոչ մշակույթով, ապա պետության տրադիցիաներով, սովորույթներով, բարքերով, մի համակարգում, որը թեև եվրոպական բաղադրիչ ունի, բայց ինքը իրեն երբեք եվրոպական ժողովուրդ ու պետություն չի համարել, այսօր էլ չի համարում (հարցազրուցավարը նշում է՝ եվրոպամերժ է նույնիսկ): Այո: Խոսքս Ռուսաստանի մասին է: Սա շատ երկար խոսակցություն է: Ընդհանրապես ռուսական պետության մասին խոսակցությունները մեզանում շատ մակերեսային են, սահմանափակված են տնտեսությամբ, առևտրով, չգիտեմ, միլիոնուկես, թե երկու միլիոն, ես ստույգ թիվը չգիտեմ (հարցազրուցավարը նշում է՝ կամ դպրոցում անցած գրականության...) հա կամ էմիգրանտներով, դրանք իհարկե մենք չենք մերժում, բայց ինքը պետությունը համակարգ է՝ քրիստոնեական, հումանիստական, տնտեսական, քաղաքագիտական, որի մեջ լինելիս պետք է վերլուծես և հաշվի առնես դրանց ադապտացվելու քո հատկությունները: Գումարած, որ իրենք՝ ռուսները, 20-րդ դարում հայտնվեցին մի համակարգի մեջ, որը իրենց գուցե թե ասեմ՝ օտար էր և խորթ, չնայած շատերը կարող են ինձ առարկել, որ հենց իրենց հարազատը հենց դա էր: Նկատի ունեմ սովետական պետությունը, որը ըստ երևույթին, ըստ էության միապետություն էր և ոչ մի կապ չուներ եվրոպական պետության հետ:

Ահա այսօր մենք այդ ընտրությունը կատարելիս մենք պետք է խոսենք պետական ընկալումների մասին: Ոչ միայն աշխարհագրական՝ որտեղ է մեզ կոմունիկացիաներով, ճանապարհներով, չգիտեմ, ժողովրդի, ազգաբնակչության ներկայությամբ ավելի հարմարավետ և ձեռնտու, այլ նաև որն է, որ մերն է, որ կարող է մերը լինել, որ կարող է նպաստել մեր զարգացմանը, մեր մտածողությունը որտեղ կարող է դրսևորվել: Էս իմաստով ես էս բանավեճը մեզանում երկու-երեք տարի առաջ սկսված շատ կարևոր եմ համարում: Ձեր նախկին ասածին ես կհամալրեի, մի փոքրիկ, ինձ թույլ կտայի համալրում անել: Մենք ոչ թե մի, էսպես ասած, դիրքորոշումից անցում ենք կատարում մի ուրիշ դիրքորոշում, այլ համալրում ենք մեր դիրքորոշման, ուրեմն, մակերեսները,

տարածությունները, ինչպես որ դա ստիպված են անելու տարիներ հետո ռուսները, երբ որ իրենք իրենց էս մղձավանջային պատմության փուլից դուրս գան:

Այս պայմաններում ինչ անելիքներ ունի հայ ժողովուրդը, հայ միտքը: Քաղաքագետները թող խոսեն քաղաքական, տնտեսագետները՝ տնտեսական, մենք մշակույթի գործիչներ ենք, մենք կխոսենք սրա մշակութային շառավիղների մասին: Եվրոպական պետություն ասածը, եվրոպական պետություն ասածի գիտելիքը ցավոք այսօր մեր հասարակության մեջ պակասում է: Պակասում է հենց ինֆորմատիկայի տեսակետից, մեր ժողովուրդը չգիտի՝ ինչ բան է եվրոպական պետությունը, այսինքն, կամ գիտի մակերեսի վրա, նա չգիտի, թե եվրոպական, քրիստոնեական ընտանիքի մեջ մտնող պետության համար ինչ արժեք, ինչ ելակետեր ունի հարկը, բանակը, հասարակությունը, հասարակական կազմակերպությունը, ազատությունը, խոսքը և այլն, և այլն, այս բոլոր պարամետրերը:

Եվ որպես մշակույթի մարդ՝ ինձ թվում է, Ձեզ հետ միասին, ես պնդում եմ, որ եթե մենք այդպիսի կողմնորոշում ենք որդեգրում, մենք պետք է մեր ժողովրդին այդ կողմնորոշման փիլիսոփայական, տնտեսական, աստվածաբանական, քաղաքական, հումանիստական բոլոր պարամետրերին տեղյակ պահենք, որպեսզի մեր ժողովուրդը հասկանա, որ խոսքը ոչ թե մի տեղից ելնել, մյուս տեղ գնալու մասին է, այլ իր ամբողջ ձևաբանությանը հատուկ մի սխեմայի մեջ մտնելն է, որտեղ ինքն իրեն ավելի անվտանգ և ստեղծագործաբար ազատ կզգա: Դրա անելու համար ես երբ որ երեկ, էսօր լսում էի մեր Ազգային ժողովի բանավեճերը, իմ մեջ մի միտք ծագեց, որ մենք՝ մշակույթի գործիչներս, մշակութորեն մտածող մարդիկս, մեր պետությունից, մեր Կառավարությունից պահանջենք, որպեսզի նա անգրագիտության այդ բացը լրացնի: Այսինքն, առնվազն թարգմանի բոլոր այն մեծագույն ստեղծագործությունները, վեպերը, տրակտատները, փիլիսոփայական աշխատությունները, որոնք մեր ժողովրդին կբացատրեն, թե ինչ բան է եվրոպական պետությունը, ինչի մասին մենք քիչ առաջ խոսեցինք: Օրինակ, Եվրոպայում էլ տեղի են ունենում խռովություններ, Կառավարությունների դեմ էսպես ասած բունտեր: Բայց ինչի՞ց է, որ մեզ մոտ դա քաղաքական երանգավորում է ստանում՝ աշխարհաքաղաքական բոլոր մանրամասներով: Ես կարծում եմ՝ սրա պատճառը այն է, որ մեր ժողովուրդը չգիտի,

չգիտի այդ ամենի մասին, և որովհետև չգիտի, իրեն թվում է, ինչպես օրինակ ես էսօր էստեղ տրանսպորտով գալիս կանգառում տեսա, որ կանգառում կանգնած և իր ազգաբնակչությանը պետության դեմ մղող, պետության դեմ հանող, պետության դեմ պրոպագանդա անող ինչ-որ մի խաժամուժ կարծում է, թե դա ընդդիմություն է: Երբ որ հասկանում ենք մենք, որ կարելի է ասած նաև բունտ անել և ասել՝ գիտեք, մի վճարեք, մենք բունտ ենք անում և... Բայց երբ որ դա հանվում է պետության դեմ՝ «էս պետությունը մեզ կործանում ա, էս պետությունը մեզ տանում է դեպի կործանում, սրանց երբ պիտի սաղին գնդակահարենք», կանգառում ղժղժում էին: Փառք ու պատիվ մեր ժողովրդին, ես, ուրեմն, բուկինիստական խանութի մոտից նստել եմ տրանսպորտ և եկել եմ էստեղ, 18 հոգի ա բարձրացել, 18-ն էլ մի մարդու պես մուծել են: Սա իրենց, մեր ժողովրդի ներքին գրագիտության, ներքին կազմակերպվածության հարցն է: Բայց ես նորից ասում եմ՝ մեր դպրոցից սկսած, բուհից սկսած, բարձրագույն ուսումնական հաստատությունից սկսած՝ պետք է մեր ժողովրդին մատուցել պետության այն ֆորմատները, որը մեր ժողովրդին, հայ ժողովրդին իր ընդունակությունները ցուցաբերելու հնարավորություններ կտա, որը մեր ժողովրդին կբացատրի՝ ինչ բան է բանակը, ինչ բան է ֆիդային, ինչ բան է զինվորը, ինչ բան է հարկը, ինչ բան է տուրքը: Ես կառաջարկեի, որ կազմակերպվեր մի 10-15 հոգիանոց մտավորականների խումբ, որը մեր պետությանը կհուշի պետության մասին մեր ժողովրդին գիտելիքներ տվող գիտությունը Հայաստան ներկրելու, Հայաստան ներբերելու մասին: Սկսած, չգիտեմ (հարցազրուցավարը նշում է՝ Մոնտեսքյոյից), այո, Մոնտեսքյոյից, անուններ չտանք, այո, ամոթ է, որ էսօր, մինչև էսօր ասենք Լեվիաթանը թարգմանված չի կամ, չգիտեմ, Հոբսի գրքերը թարգմանված չի, էլ չեմ ասում այսօրվա պետական, աստվածաբանական պետության, պետական աստվածաբանության ռահվիրաները, որոնց, ի դեպ, ռուսները թարգմանում են իրենց պրիզմայով, էսպես ասած, բացատրելով, որոնք մեր հասարակության մեջ ներկա չեն: Ես էս առաջարկը կանեի իշխանություններին:»:

IV. Վարքագծի կանոնների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ, կիրառելի իրավական հիմքեր

4.1. ՀՀ Սահմանադրության 197-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն.

«5. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն:»

4.2. «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Կարգավորող պետական մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն է:»:

4.3. «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«3. Կարգավորող պետական մարմնի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն:»

4.4 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի համաձայն.

«(...)

2. Հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային:»:

3. Պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական: (...)»:

4.5 Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«3. Ինքնավար պաշտոններն են (...) անկախ պետական մարմինների անդամների, (...) պաշտոնները:»:

4.5 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն.

«1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի),

համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:

(...)

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները: (...)»:

4.6. Հանձնաժողովի՝ 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշման հավելվածով սահմանված պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Վարքագծի կանոնագիրք) 1-ին կետի համաձայն.

«1. (...) կանոնագիրքը վարքագծի կանոնների ամբողջություն է, որով պետք է առաջնորդվեն համապատասխան պաշտոն զբաղեցնող անձինք:»:

4.7. Վարքագծի կանոնագրքի 64-րդ կետի համաձայն՝

«64. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քաղաքական զսպվածության պարտավորություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձը, այդ թվում՝ անկախ ու ինքնավար մարմիններում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձը, ում անմիջական ղեկավարը կամ վերադասն ունի քաղաքական զսպվածության օրենսդրական պարտավորություն, պարտավոր է զերծ մնալ քաղաքական բնույթի հանրային ելույթներ ունենալուց, քաղաքական կողմնորոշում ունեցող հոդվածներ հրապարակելուց կամ սոցիալական մեդիայում ունեցած իր օգտահաշվից քաղաքական որևէ կուսակցության օգտին կամ դրա դեմ գրառումներ կատարելուց, նմանատիպ գրառումներ հավանելուց կամ տարածելուց:»

4.8. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն:

2. Վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին:

3. Եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում է դիմողին, պաշտոն զբաղեցնող անձին և նրա վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (առկայության դեպքում), (...):

(...)

6. Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման և վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի շահերի բախման հարցերով Հանձնաժողովի եզրակացությունները դրանց ընդունման պահից եռօրյա ժամկետում հրապարակվում են Հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական համապատասխան պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է Հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրված խախտման կամ շահերի բախման վերաբերյալ ներկայացնել հրապարակային պարզաբանում, որն ստացվելու պահից եռօրյա ժամկետում հրապարակվում է այն մարմնի կայքէջում, որտեղ պաշտոն զբաղեցնող անձն զբաղեցնում է պաշտոն:»:

V. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

Հանձնաժողովը հարկ է համարում նախ անդրադառնալ Դիրքորոշմամբ նշված մեկնաբանությանն առ այն, որ Հ.Հակոբյանն իր հարցազրույցներում մշտապես որդեգրել է այն փիլիսոփայությունը, որ ինքը հանդես չի գալիս որպես Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ, այլ բանաստեղծ, թարգմանիչ, Հայաստանի մշակույթի նախկին նախարար: Դիրքորոշմամբ նշվել է, որ Սահմանադիրը քաղաքական զսպվածություն պահպանելու կամ դրսևորելու պարտականությունը սահմանել է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների «լիազորությունների իրականացման ժամանակահատվածում», իսկ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներն իրենց լիազորություններն իրականացնում են բացառապես հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթների և հանձնաժողովի նիստերի ընթացքում, և որևէ հարցազրույցի ընթացքում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի որևէ անդամ չի իրականացնում Սահմանադրական կամ օրենսդրական որևէ լիազորություն:

Վերոգրյալի առնչությամբ Հանձնաժողովը նախ ընդգծում է, որ Հարուցման որոշմամբ արդեն իսկ անդրադարձ է կատարվել այն հանգամանքին, թե արդյոք քաղաքական զսպվածություն ցուցաբերելու և քաղաքական բնույթի հանրային ելույթներ չունենալու պարտականությունները վերաբերում են **պետական պաշտոն զբաղեցնող անձի պաշտոնավարման ընթացքում դրսևորված ցանկացած վարքագծին, թե բացառապես լիազորությունների իրականացման հետ կապված վարքագծին:** Հարուցման որոշմամբ, մասնավորապես, նշվել է.

«(...) ՀՀ Սահմանադրությամբ քաղաքական զսպվածություն դրսևորելու պարտականությունը սահմանվում է որպես «լիազորությունների իրականացման ժամանակահատվածում» գործող պարտականություն: ***Նշված բառօգտագործումը, ըստ Հանձնաժողովի, ուղղված է եղել անկախ մարմինների անդամների ավելի լայն պարտականություն սահմանելուն: Այլ խոսքերով, Հանձնաժողովը գտնում է, որ «լիազորությունների իրականացման ժամանակահատվածում» արտահայտությունը պետք է մեկնաբանվի այնպես, որ նշված պարտականությունն առկա է պաշտոնավարման ամբողջ ընթացքում՝ անկախ այն հանգամանքից՝ տվյալ պահին անձը գործել է որպես պաշտոնատար անձ, թե ոչ:*** *Նմանապես, Կանոնագրքի*

64-րդ կետով չի նախատեսվում, որ նշված կանոնը կիրառելի է միայն հանրային պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունները կամ ծառայողական պարտականությունները կատարելիս, ինչից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Կանոնագրքի 64-րդ կետով սահմանված պարտականությունները կիրառելի են բոլոր դեպքերում՝ անկախ այն հանգամանքից՝ այդ պահին հանրային պաշտոն զբաղեցնող անձը հանդես է գալիս ի պաշտոնե, թե որպես մասնավոր անձ:»:

Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել նաև, որ ՀՀ Սահմանադրության տարբեր հոդվածներում գործածվում են երկու տարբեր արտահայտություններ՝ «լիազորություններներն իրականացնելիս» և «լիազորությունների իրականացման ժամանակահատվածում»:

Այսպես, Սահմանադրության 123-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահն **իր լիազորություններն իրականացնելիս** անաչառ է և առաջնորդվում է բացառապես համապետական և համազգային շահերով: Սահմանադրության 139-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **իր լիազորություններն իրականացնելիս** Հանրապետության նախագահն ընդունում է հրամանագրեր և կարգադրություններ:

«Լիազորությունների իրականացման ժամանակահատվածում» արտահայտությունը գործածվում է ՀՀ Սահմանադրության 193-րդ հոդվածի 3-րդ, 195-րդ հոդվածի 5-րդ, 197-րդ հոդվածի 5-րդ, 199-րդ հոդվածի 5-րդ և 201-րդ հոդվածի 4-րդ մասերով՝ բացառապես Սահմանադրությամբ նախատեսված անկախ պաշտոնատար անձանց կամ անկախ պետական մարմինների անդամների՝ քաղաքական զսպվածություն դրսևորելու պարտականությունը և կուսակցության անդամ լինելու ու քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքները սահմանող դրույթներում:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:

Ըստ այդմ, Հանձնաժողովը գտնում է, որ եթե վերոնշյալ բոլոր հոդվածները վերաբերեին անմիջականորեն լիազորությունների իրականացման պահին դրսևորված վարքագծին, ապա դրանցով կգործածվեին նույն բառակապակցությունները: Միաժամանակ, ակներև է, որ Սահմանադրության 123-րդ հոդվածով նախատեսված՝ Հանրապետության նախագահի պարտականությունը՝ լիազորություններն իրականացնելիս լինելու անաչառ, կամ 139-րդ հոդվածով նախատեսված կանոնը՝ լիազորություններն իրականացնելիս հրամանագրեր և կարգադրություններ ընդունելու մասին, կիրառելի են բացառապես Հանրապետության նախագահի կողմից իր լիազորություններն իրականացնելու պահին: Ըստ այդմ, Հանձնաժողովը գտնում է, որ «լիազորություններն իրականացնելիս» արտահայտությունն ավելի նեղ է և նշանակում է անմիջականորեն լիազորությունների իրականացման պահը, իսկ «լիազորությունների իրականացման ժամանակահատվածը» պետք է մեկնաբանվի ավելի լայն ձևով՝ նշանակելով անձի պաշտոնավարման ամբողջ ընթացքը՝ այդ թվում՝ որպես մասնավոր անձ նրա վարքագիծը:

Բացի այդ, Հանձնաժողովը գտնում է, որ այն հանգամանքը, որ «լիազորությունների իրականացման ժամանակահատվածում» կիրառելի պարտականությունների թվում ՀՀ Սահմանադրությամբ սահմանվել են ոչ միայն քաղաքական զսպվածություն դրսևորելու պահանջը, այլ նաև կուսակցության անդամ չլինելու և քաղաքական գործունեությամբ չզբաղվելու արգելքները, լրացուցիչ ընդգծում է նշված արտահայտության ավելի լայն իմաստային կիրառելիությունը, քանի որ բացառապես լիազորությունների իրականացման պահին կուսակցության անդամ չլինելու պահանջի սահմանումն առարկայազուրկ կլիներ:

Նմանապես, Վարքագծի կանոնագրքի դրույթներում, սահմանելով պաշտոնատար անձի կողմից անմիջականորեն իր **լիազորություններն իրականացնելու պահին** կիրառելի վարքականոններ, գործածվում է «լիազորություններն իրականացնելիս» արտահայտությունը (Վարքագծի կանոնագրքի 22-րդ և 39-րդ կետեր): Մի շարք այլ կանոններում (Վարքագծի կանոնագրքի 18-րդ, 19-րդ, 56-րդ, 57-րդ, 63-րդ կետեր) գործածվում է «պաշտոնեական (ծառայողական) պարտականություններն իրականացնելիս» բառակապակցությունը: Միաժամանակ,

նման արտահայտություններ չեն կիրառվում Վարքագծի կանոնագրքի 64-րդ կետով, որը պարզապես ամրագրում է «քաղաքական բնույթի հանրային ելույթներ ունենալուց» զերծ մնալու ընդհանրական պարտականությունը: Ընդ որում, Վարքագծի կանոնագրքի 4-րդ կետի համաձայն՝ կանոնագրքով սահմանվում են նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձի՝ որպես մասնավոր անձի վարքագծի որոշակի կանոններ, որոնք կարող են ազդել հանրային իշխանության հեղինակության վրա, նվազեցնել հանրության վստահությունը հանրային ծառայության նկատմամբ:

Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրում է, որ ինչպես Վարքագծի կանոնագրքի 64-րդ կետով, այնպես էլ ՀՀ Սահմանադրության 197-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պարտականությունները կիրառելի են անձի պաշտոնավարման ամբողջ ընթացքի նկատմամբ՝ անկախ նրանից՝ տվյալ վարքագիծը դրսևորվել է լիազորություններն իրականացնելիս, թե ոչ:

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովն ընդգծում է, որ Վարքագծի կանոնագրքի 64-րդ կետը կիրառելի է Հրապարակմամբ ներկայացված հարցազրույցի ընթացքում Հ.Հակոբյանի դրսևորած վարքագծի նկատմամբ անկախ այն հանգամանքից, որ հարցազրույցի շրջանակներում Հ.Հակոբյանը չի ներկայացվել որպես Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ, նրա պաշտոնը որևէ այլ կերպ չի հիշատակվել, նա ներկայացվել է որպես «Հակոբ Մովսես՝ բանաստեղծ, թարգմանիչ, Հայաստանի մշակույթի նախկին նախարար»:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ վարույթի շրջանակներում քննարկվում է Հ.Հակոբյանի հրապարակային խոսքի իրավաչափության հարցը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նշված դեպքում կարծիքի արտահայտման ազատության իրավունքի սահմաններին:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն.

«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

(...)

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»:

Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն.

«1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: (...)

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության

բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) մի շարք գործերի շրջանակներում անդրադարձել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կամ հանրային ծառայողների կարծիքի արտահայտման ազատության սահմանափակումներին՝ կապված քաղաքական չեզոքություն կամ քաղաքական զսպվածություն դրսևորելու պարտականության հետ:

Այսպես, օրինակ, Կարապետյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործի շրջանակներում Եվրոպական դատարանն արձանագրել է, որ հստակ կատեգորիայի քաղաքացիական ծառայողների քաղաքական չեզոքությունը պահպանելու անհրաժեշտությանն ուղղված միջոցները կարող են սկզբունքորեն իրավաչափ և համաչափ համարվել: Միաժամանակ, Եվրոպական դատարանը նշել է, որ այդպիսի միջոցը չպետք է կիրառվի ընդհանուր ձևով, ինչը կարող է ազդել պաշտպանվող իրավունքի էության վրա՝ առանց հաշվի առնելու խնդրո առարկա քաղաքացիական ծառայողի գործառույթներն ու դերը և, մասնավորապես, յուրաքանչյուր դեպքի հանգամանքները:[7]

Եվրոպական դատարանը, անդրադառնալով դատավորների, դատախազների արտահայտման ազատությանը, ընդգծել է, որ արդարադատության համակարգի հանրային ծառայողներից ակնկալելի է, որ նրանք պետք է իրենց արտահայտման ազատությունը դրսևորելիս ցուցաբերեն զսպվածություն բոլոր այն դեպքերում, երբ հավանական է, որ դատական համակարգի իշխանությունը և անկողմնակալությունը կասկածի տակ դրվեն: Գլխավոր դատախազի տեղակալի պարագայում, օրինակ, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ վերջինս՝ որպես պետության ընդհանուր շահերի պաշտպանության իրավասությամբ օժտված հանրային իշխանության մարմնի ներկայացուցիչ, պարտականություն ունի դրսևորելու քաղաքական զսպվածություն և չեզոքություն:[8] Միաժամանակ, Եվրոպական դատարանը նշել է, որ դատական

---

[7] Կարապետյանը և այլոք ընդդեմ Հայաստանի (Karapetyan and Others v. Armenia) գործով 2016 թվականի նոյեմբերի 17-ի վճիռ, դիմում no. 59001/08, § 48

[8] Տես Ջհանգիրյանն ընդդեմ Հայաստանի (Jhangoryan v. Armenia) գործով 2013 թվականի փետրվարի 5-ի որոշումը, դիմում no. 8696/09

համակարգի գործունեության վերաբերյալ հարցերը հանրային հետաքրքրություն են ներկայացնում, որոնց շուրջ բանավեճը սովորաբար ավելի բարձր մակարդակի պաշտպանությամբ է օժտված Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի ներքո: Անգամ եթե բանավեճի շրջանակներում քննարկվող հարցը քաղաքական ենթատեքստ ունի, դա ինքնին բավարար չէ կանխարգելելու համար, որ, օրինակ, դատավորը հայտարարություն անի այդ թեմայով:[9]

Եվրոպական դատարանի՝ վերոգրյալ և այլ վճիռներով արտահայտած դիրքորոշումների ուսումնասիրության հիման վրա Հարուցման որոշմամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ քաղաքական զսպվածություն դրսևորելու կամ քաղաքական բնույթի հանրային ելույթներ ունենալուց զերծ մնալու պարտականությունը չի կարող ենթադրել հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից քաղաքական հարցերով կարծիքի արտահայտման իսպառ բացառում, և Վարքագծի կանոնագրքի 64-րդ կետի դրույթները չպետք է մեկնաբանվեն այնպես, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձը զրկված լինի քաղաքականությանը վերաբերելի հարցերով ցանկացած կարծիքի հրապարակային արտահայտումից:

Հանձնաժողովը, միաժամանակ, գտնում է, որ նշված հրապարակային արտահայտումը չպետք է հատի զսպվածության որոշակի սահմանը, որը պետք է որոշվի յուրաքանչյուր դեպքի հանգամանքների առանձին քննարկմամբ:

Այս համատեքստում, անդրադառնալով Դիրքորոշմամբ նշված դիտարկմանն առ այն, որ քաղաքական զսպվածության դեպքում խոսքի ավելի չափավոր, մեղմ արտահայտման մասին է խոսքը, որպիսի պարագայում տվյալ պաշտոնատար անձն իր գործողություններով չպետք է հարի, սատարի, աջակցի (քաղաքական) հակամարտության որևէ կողմի, Հանձնաժողովն արձանագրում է, որ թեև որոշակի քաղաքական ուժի կամ կուսակցությանը սատարող խոսքը ևս Վարքագծի կանոնագրքի 64-րդ կետով նախատեսված կանոնի խախտման կարող է հանգեցնել, այնուամենայնիվ, նշված կետով նախատեսված սահմանափակումների շրջանակը շատ ավելի լայն է:

---

[9] Տես Կովեսին ընդդեմ Ռումինիայի (Kövesi v. Romania) գործով 2020 թվականի մայիսի 5-ի վճիռը, դիմում no. 3594/19, § 201

Այսպես, Վարքագծի կանոնագրքի 64-րդ կետով նախատեսվում է քաղաքական զսպվածության պարտականություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց 3 պարտականություն՝

1) զերծ մնալ քաղաքական բնույթի հանրային ելույթներ ունենալուց,

2) զերծ մնալ քաղաքական կողմնորոշում ունեցող հոդվածներ հրապարակելուց,

3) զերծ մնալ սոցիալական մեդիայում ունեցած իր օգտահաշվից քաղաքական որևէ կուսակցության օգտին կամ դրա դեմ գրառումներ կատարելուց, կամ դրա դեմ գրառումներ հավանելուց կամ տարածելուց:

Հանձնաժողովը գտնում է, որ «քաղաքական բնույթի հանրային ելույթներ ունենալուց զերծ մնալու» պարտականությունն ավելի լայն է և ներառում է նաև քաղաքական կուսակցության օգտին կամ դեմ ելույթներ չունենալու պարտականությունը: Այն կարող է ներառել նաև, օրինակ, քաղաքական իշխանությանն աջակցող խոսքը, տվյալ հանրային իշխանության մարմնի լիազորությունների շրջանակին չառնչվող ոլորտում բարեփոխումների կամ դրանց դեմ ուղղված քաղաքական շարժումների վերաբերյալ՝ աջակցող կամ քննադատական խոսքը և այլն:

Վերոգրյալի համատեքստում դիտարկելով սույն եզրակացության 1.3.1 և 1.3.2 կետերով ներկայացված՝ Հ.Հակոբյանի խոսքը՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

1.3.1-ին կետում ներկայացված խոսքը գլխավորապես վերաբերում է «Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» օրենքի ընդունման վերաբերյալ հանրային արձագանքին և դրա վերաբերյալ Հ.Հակոբյանի մոտեցմանը: Հանձնաժողովն արձանագրում է, որ Հ.Հակոբյանի խոսքը, ընդհանուր առմամբ, արտահայտում է Հայաստանի կողմից ԵՄ անդամակցության գաղափարի աջակցություն: Հ.Հակոբյանը անդրադառնում է հայ ժողովրդի արժեհամակարգին՝ նշելով, որ «Հայաստանը և հայ ժողովուրդը իր արժեհամակարգով մտնում է այն ընտանիքի մեջ, որը կոչվում է եվրոպական-քրիստոնեական»՝ ընդգծելով, որ «քրիստոնեական» նշումը կատարում է, քանի որ «մշակույթները ստորաբաժանվում են, տիպաբանվում են ոչ միայն աշխարհագրականորեն, այլ նաև հենց իրենց տիպաբանությամբ»: Հակոբյանն

այնուհետև անդրադառնում է պատմական իրողությունների՝ նշում է, որ «մենք 20-րդ դարում հայտնվել ենք եթե ոչ մշակույթով, ապա պետության տրադիցիաներով, սովորույթներով, բարքերով մի համակարգում, որը թեև եվրոպական բաղադրիչ ունի, բայց իրեն երբեք եվրոպական ժողովուրդ ու պետություն չի համարել (...) խոսքս Ռուսաստանի մասին է»: Անդրադառնալով Եվրոպական միությանն անդամակցելու նախաձեռնությանը՝ Հ.Հակոբյանը ընդգծում է. «Այս պայմաններում ի՞նչ անելիքներ ունի հայ ժողովուրդը, հայ միտքը: Քաղաքագետները թող խոսեն քաղաքական, տնտեսագետները՝ տնտեսական, մենք մշակույթի գործիչներ ենք, մենք կխոսենք սրա մշակութային շառավիղների մասին»: Հ.Հակոբյանի հաջորդող խոսքն այն մասին է, թե ինչ պետք է անեն մշակութային գործիչները՝ եվրոպական կողմնորոշման տարբեր պարամետրերի մասին ժողովրդին իրազեկելու ուղղությամբ, ինչպես նաև նման իրազեկման պակասի մասին: Այս համատեքստում է, որ Հ.Հակբոյանն անդրադառնում է հանրային տրանսպորտի սակագների փոփոխության դեմ գործողություններին կամ խոսքին՝ համեմատելով դրանք «Եվրոպայում տեղի ունեցող խռովությունների, Կառավարությունների դեմ էսպես ասած բունտերի հետ»: Այս համատեքստում Հ.Հակոբյանն ընդգծում է, որ Հայաստանում նման երևույթները քաղաքական երանգավորում են ստանում՝ աշխարհաքաղաքական բոլոր մանրամասներով և իր դժգոհությունն է արտահայտում **նշված օրը հանրային տրանսպորտից օգտվելիս վճարելու դեմ արտահայտված անձի կամ անձանց՝** իրենց կարծիքը արտահայտելու ձևի կապակցությամբ՝ նշելով, որ «դա հանվում է պետության դեմ՝ «էս պետությունը մեզ կործանում ա, էս պետությունը մեզ տանում է դեպի կործանում, սրանց երբ պիտի սաղին գնդակահարենք», կանգառում ղժղժում էին»:

Վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է, որ Հ.Հակոբյանի խոսքն առավելապես ուղղված է եղել հայ ժողովրդի արժեհամակարգի, մշակութային ընկալումների և պատկերացումների վերաբերյալ վերլուծություն ներկայացնելուն, դրանք եվրոպական արժեհամակարգի հետ համեմատելուն, խնդիրներ վեր հանելուն: Հենց այս համատեքստում է, որ Հ.Հակոբյանի կողմից կատարվել են հանրային տրանսպորտի սակագների թանկացման դեմ արտահայտվող քաղաքացիների վերաբերյալ գնահատողական դատողություններ՝ համեմատելով քաղաքական

ակցիաների հայաստանյան և եվրոպական մշակույթը: Ընդ որում՝ Հ.Հակոբյանն անդրադարձել է ոչ թե կոնկրետ հասարակական-քաղաքական գործիչների կամ տրանսպորտի սակագների թանկացման դեմ ամբողջ շարժմանը, այլ կիսվել է իր անձնական փորձով՝ տվյալ օրը տեղի ունեցած միջադեպին, որին նա հանրային տրանսպորտից օգտվելիս ականատես է եղել, և քննադատել է այդ միջադեպի շրջանակներում դրսևորված վարքագիծը:

Վերոգրյալի հաշվառմամբ Հանձնաժողովը գտնում է, որ սույն եզրակացության 1.3.1-ին կետով ներկայացված՝ Հ.Հակոբյանի խոսքն առավելապես կրում է մարդաբանական կամ մշակութային մեկնաբանության բնույթ և չունի քաղաքական բնույթ: Ըստ այդմ, նշված կետով ներկայացված խոսքի կապակցությամբ Վարքագծի կանոնագրքի 64-րդ կետի խախտում առկա չէ:

Ինչ վերաբերում է սույն եզրակացության 1.3.2-րդ կետով ներկայացված խոսքին, ապա Հանձնաժողովն արձանագրում է, որ այն կատարվել է՝ «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության՝ Եվրոպական միությանն անդամակցության դեմ դիրքորոշման, ազգային պատկերացումները նշված կուսակցությունից սերելու, դրանց տրանսֆորմացիաների և քաղաքական մտքի տրանսֆորմացիայի անհրաժեշտության վերաբերյալ հարցին ի պատասխան:

Հանձնաժողովը գտնում է, որ նշված խոսքը պետք է տարանջատել երկու հատվածի՝ պատմական իրողությունների վերաբերյալ խոսք և կուսակցության ներկայիս գործունեության կամ գաղափարախոսության վերաբերյալ խոսք:

Այսպես, անդրադառնալով պատմական իրողություններին, Հ.Հակոբյանը նշել է.

1) «Դուք շատ ցավոտ թեմայի մասին եք խոսում՝ Դաշնակցության, որը մեր պատմության մեջ երկակի նշանակություն է ունեցել»,

2) «դա պատմական ամենադժվար ժամանակներում գործած կուսակցություն է»,

3) «10-րդ դարից սկսած մեր պատմական դժբախտությունների անհաշվարկայնության մեջ Դաշնակցության մեղքը շատ մեծ է»,

4) «20-րդ դարի սկզբին Դաշնակցությունը (...) հեղափոխական նկրտումներից ելնելով, (...), իր դրոշի վրա գրեց՝ մահ կամ ազատություն»,

5) «չեմ ասում, թե երեկ (Դաշնակցության գաղափարախոսությունը, նշումը՝ Հանձնաժողովի) վտանգավոր չի եղել, մենք տեսանք, թե պատմության մեջ ինչ հարվածներ կերանք մենք մեր երեք-չորսհազարամյա հայրենիքում, ուղղակի բնաջնջվեցինք»,

6) «մեզ առաջնորդող կուսակցությունները ճիշտ չպատկերացրեցին քաղաքական միջավայրերում մեր միմիկրիաների, մեր ադապտացիաների, մեր քաղաքական հարմարվողականության, քաղաքական մեխանիզմների մեջ մեզ տեսնելու կարողությունները և գնացին դեվիզների հետևից՝ մահ կամ ազատություն, որոնցից դե երկու այլընտրանք է դրվել, երկուսից մեկն էլ մենք ստացանք»:

Անդրադառնալով կուսակցության ներկայիս գործունեությանն ու գաղափարախոսությանը՝ Հ.Հակոբյանը նշել է.

1) «Էստեղ շատ հետաքրքիր մի բան կա, կուսակցությունն ինչքան էլ ավանդական լինի, ավանդական կուսակցությունները նույնպես նորանալու, թարմանալու, ադապտացվելու, իրենց ժամանակաշրջանի խնդիրների մեջ մտնելու և դրանց լուծումները փնտրելու պարտավորություն ունեն: Ես կարծում եմ, որ Դաշնակցությունը իր ազգային փիլիսոփայությամբ, ազգային գաղափարախոսությամբ, փիլիսոփայություն չասենք, ուղղակի ինքը իրեն դրել է մի շրջանակի մեջ, որից դուրս գալ ինքը հազիվ թե կարողանա, եթե իր գաղափարախոսության ամբողջ իդիոմատիկան չփոխի:»,

2) «Դաշնակցությունն ինչից է դժգոհում, երբ որ իր դրոշի վրա դրված երկու ընտրություններից («մահ կամ ազատություն», նշումը՝ Հանձնաժողովի) մեկը ստացավ ինքը:»,

3) «Դաշնակցությունը պետք է փոխի իր ազգային ամբողջ գաղափարախոսությունը: 21-րդ դարում, երբ որ մենք ունենք պետություն՝ Հայաստանի Հանրապետություն, 3 միլիոնանոց մոնոլիտ, միասեռ բնակչությամբ, երբ որ մենք ունենք պետական ամբողջ աքսեսուարները, երբ որ մենք Միավորյալ ազգերի կազմակերպության անդամ ենք, երբ որ մենք միջազգայնորեն ճանաչված և միջազգային իրավունքի չափանիշներով նաև պարտավոր ենք նաև շփվել մեր շրջակայքի, միջավայրի, առանձնապես մեր հարևանների հետ, Դաշնակցությունը

միթե, եթե չասեմ ժամանակավրեպ, ապա վտանգավոր չի համարում այս իրավիճակի համար իր «մահ կամ ազատություն» կարգախոսը:»,

4) «մեր ազգային պատկերացումների մեջ, հայ ժողովրդի ազգային պատկերացումների մեջ՝ ինքնապաշտպանության, ինքնապահպանության, զարգացման, տնտեսության, հարևանների, քաղաքականության, չգիտեմ հազարավոր տեխնոլոգիաների մեջ դեռևս դրված է դաշնակցական գաղափարախոսությունը, որը այսօր շատ վտանգավոր գաղափարախոսություն է հայ ժողովրդի համար»,

5) «Ես էսօր շատ ուրախ կլինեի, եթե Դաշնակցությունը վերականգներ, վերածներ իրեն, որովհետև դա ի միջի այլոց, այսպես թե այնպես, դա իհարկե ավանդական կուսակցություն է, բայց էսօրվա խնդիրներով վերածներ իրեն և ոչ թե փորձեր էսօրը մտցնել իր կարգախոսների, դեվիզների և քաղաքականությունների մեջ:»:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նախ ընդգծել, որ Եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ պատմական ճշմարտության փնտրտուքը արտահայտման ազատության անքակտելի մասն է: Մի շարք գործերով Եվրոպական դատարանը նաև կարևորել է հատկապես ծանր արարքների, այն է՝ հնարավոր պատերազմական կամ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների կապակցությամբ պատմական փաստերի վերաբերյալ ազատ բանավեճի առկայությունը:[10]

Հանձնաժողովն արձանագրում է, որ Հ.Հակոբյանի կողմից քննարկված պատմական իրողությունները կամ գնահատականները՝ կապված հայ ժողովրդի պատմության ընթացքում «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության դերի հետ, վերաբերում են ազգային մտածողությանը, գաղափարախոսությանը, մոտեցումներին, որոնք, ըստ Հ.Հակոբյանի, հանգեցրել են հայ ժողովրդի համար կործանարար հետևանքների: Այսպես, Հ.Հակոբյանը խոսում է «Դաշանակցության

---

[10] Տես Դինքն ընդդեմ Թուրքիայի (Dink v. Turkey) գործով 2010 թվականի սեպտեմբերի 14-ի վճիռը, դիմումներ nos. 2668/07, 6102/08, 30079/08, § 135, Դմիտրեվսկիյն ընդդեմ Ռուսաստանի (Dmitrevskiy v. Russia) գործով 2017 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, դիմում no. 42168/06, § 106, Մարինոնին ընդդեմ Իտալիայի (Marinoni v. Italy) գործով 2021 թվականի նոյեմբերի 18-ի վճիռը, դիմում no. 27801/12, § 74

գաղափարախոսության» վտանգների մասին, նշում, որ «մենք (...) ուղղակի բնաջնջվեցինք», միաժամանակ նշում է նաև, որ նշված գաղափարախոսությունը ձևավորվել էր տվյալ ժամանակաշրջանի իրադարձությունները հաշվի առնելով կամ դրանցով պայմանավորված, և ըստ այդմ՝ տվյալ շրջանին համապատասխան կամ անհրաժեշտ է համարում:

Հանձնաժողովը գտնում է, որ քաղաքական ելույթներով հանդես գալուց զերծ մնալու արգելքը և քաղաքական զսպվածություն դրսևորելու պարտականությունը չեն կարող մեկնաբանվել այնպես, որ բացառեն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից պատմական իրողությունների վերաբերյալ հրապարակային դատողությունների կատարման հնարավորությունը, հատկապես այն դեպքում, երբ խոսքը գնում է գոյաբանական հարցերի կամ ազգային ինքնության համար կարևոր նշանակություն ունեցող այլ հարցերի մասին:

Միաժամանակ, Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ Հ.Հակոբյանի խոսքը չի սահմանափակվել պատմական իրողությունների քննարկմամբ կամ դրանց վերաբերյալ գնահատականներ հնչեցնելով: Այսպես, Հ.Հակոբյանն, ըստ էության, քննադատել է նաև «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության ներկայիս գործունեությունը՝ նշելով, որ կուսակցությունը պետք է փոխի իր ազգային ամբողջ գաղափարախոսությունը, այն կոչելով «հայ ժողովրդի համար այսօր շատ վտանգավոր գաղափարախոսություն», ցանկություն արտահայտելով, որ կուսակցությունը վերածնի իրեն այսօրվա խնդիրներով՝ այսօրը իր «կարգախոսների, դեվիզների և քաղաքականությունների մեջ» մտցնել փորձելու փոխարեն:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոգրյալ խոսքերը չեն կարող համարվել «կուսակցության դեմ» ուղղված խոսք, քանի որ Հ.Հակոբյանը չի կատարել կուսակցությանը չսատարելու կամ այլ կուսակցությանն աջակցելու կոչեր կամ նման քարոզ: Այնուամենայնիվ, Հ.Հակոբյանն իր խոսքով մեկնաբանել և քննադատել է կուսակցության գործունեությունն ու գաղափարախոսությունը, այդ թվում՝ կուսակցության գաղափարախոսությունը կոչելով «հայ ժողովրդի համար շատ վտանգավոր», ինչը, Հանձնաժողովի գնահատմամբ, կարող է խիստ քննադատություն համարվել:

Հանձնաժողովը գտնում է, որ քաղաքական կուսակցության ուղղակի անվանակոչմամբ դրա գործունեությունը կամ գաղափարախոսությունը քննադատող հրապարակային խոսքը ելույթին (տվյալ դեպքում՝ հարցազրույցին) հաղորդում է քաղաքական բնույթ՝ անկախ այն հանգամանքից, որ այն ներառել է նաև պատմական իրադարձությունների գնահատական:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Հ.Հակոբյանի՝ սույն եզրակացության 1.3.2-րդ կետով ներկայացված խոսքը՝ այնքանով, որքանով այն պարունակում է քաղաքական կուսակցության ներկա գործունեության և գաղափարախոսության քննադատություն՝ հանգեցրել է Վարքագծի կանոնագրքի 64-րդ կետի խախտման:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 33-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 6-րդ մասերը՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ Հակոբ Հակոբյանի կողմից վարքագծի կանոնի խախտման առկայության մասին:

2. Եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկել Հակոբ Հակոբյանին և Սեյրան Օհանյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**